թերի թափել 'ի նոցանէ։ Սակայն Հայք գիտէին թէ առանց կնքոյ եւ գրոյ Մուվէլլային՝ չգործէր օգուտ ինչ Իլամ Դատաւորին. զի նա էր վերատեսուչ գործոյն հրամանաւ Արքայի, և յայտնի գիտացեալ թէ չունի կատարիլ գործն ձեռամբ նորին, 'ի բաց կացին 'ի նմանէ։

Կոչեալ զնոսա առաջի իւր Նուրի Էֆէնտի, յայտնապէս ասէր՝ թէ գործս այս չկատարի ասա. զի 'ի տուրս առաւել են Ցոյնք քան զՀայս, և ակներեւ տեսանի թէ Կուսակալն, Դատաւորն և այլազգիք քաղաքիս առաւել ունին նեղել զձեզ պաշտպանելով զՑոյնս, և գանձիւք վճարել զգործն ընդդէմ է հրամանի Արքային, վասն որոյ դուք գրեցէք առանձին մի ըստ միոջէ զամենայն զեղեալսն առ գլխաւորս ազգին ձերոյ, և ես գրեցից զամենայն զոր միանգամ տեսի և լուայ առ գլխաւոր վերատեսուչ գործոյս Պաշմագճի Զատէ Զէքի Էֆէնտի և նա անխտիր խորհրդակցելով ընդ մեծի Դենպեռին, և 'ի միասին զամենայն ինչ յանդիման կացուցանեն առաջի Արքայի. յայնժամ ելանէ անտի հրաման հզօր և կատարին ամենայն խնդիրք ձեր։ Հաճոյ թուեցաւ այս բան Հայոց, և գրեցին։

Ի սմին ժամանակի յարեաւ Խոճաքեանն գնալ 'ի Կոստանդինուպոլիս. Հայք մեղադրէին զնա եւ ասէին. դու Ոստիկան կարգեալ 'ի կողմանէ Տէրութեան, զիա՞րդ անկատար թողեալ զգործն փութաս մեկնիլ ասա։ Եւ նա պատճառէր զերկարիլ գործոյն, զանհաստատ միտս Դատաւորին, երթալ ծանուցանել զայս ամենայն ասէր Կուսակալին. եթէ ոչ կատարեսցի անդ, փութալ 'ի Կոստանդինուպոլիս եւ յայտ առնել Արքայի և սպասել հրամանի նորին. չծանրանալ իւր ծախիւք 'ի վերայ Հայոց, և զժամանումն աւուրց հասանելոյ իշխանութեան, զոր խոստացեալ էին 'ի Դրանէ, այլովքն հանդերձ։ Ցորդորէր զնա եւ Նուրի Էֆէնտի ունկնդիր լինիլ բանից իւրոց, չթողուլ զգործն անկատար եւ տարաժամ մեկնիլ, թերեւս բարկասցի Արքայ. այլ Նիստ ասա ասէր, զի ծանուցցուք Արքայի և ըստ հրամանի նորին գործեսցուք. այլ ես ասէ ոչ մեկնիմ ասա յուսացեալ 'ի զօրութիւն առաքչին իմոյ, այլ ծանուցանեմ եւ սպասեմ պատասխանւոյ։ Չէր հնար Խոճաքեանին մնալ յերուսաղէմ. զի գիտութեամբ Դա-